ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.10.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 39/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-39/15 բողոք) և կից փաստաթղթերը, Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացրած փաստաթղթերը, «ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-39/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.10.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 14.10.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հայտարարվել է «ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին

մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտ է ներկայացրել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի կոնսորցիումը (այսուհետ նաև՝ Կոնսորցիում):

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.10.2015թ. կայացած նիստում ընտրված մասնակից է ճանաչվել «Շինարար 10» ՍՊԸ-ն, իսկ Կոնսորցիումի ներկայացրած հայտը մերժվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովի վերը նշված որոշումը կայացվել է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների խախտմամբ, մասնավորապես, Հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը նշել է, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի հրավերին չհամապատասխանող համարելը Հանձնաժողովը պատճառաբանել է նախկինում կատարված աշխատանքների նույնանման չլինելու և հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ըստ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի՝ Հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ են, քանի որ Հանձնաժողովը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկել հայտին կցված բոլոր փաստաթղթերը: Եթե Հանձնաժողովը պատշաճ ուսումնասիրեր Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը, ապա կհամոզվեր, որ Կոնսորցիումի կողմից նախկինում կատարված աշխատանքները նույնանման են Պատվիրատուի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների հետ:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի գործողությունները սուբյեկտիվ են, դրանց արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված մրցակցության, հավասարության սկզբունքները և Հանձնաժողովն իր ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում զրկել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի կոնսորցիումին մրցակցության և հավասարության պայմաններում Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել «ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը

նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.10.2015թ. որոշումը:

Ընկերությունը 2015 թվականի հոկտեմբերի 26-ին դիմում է ներկայացրել Կենտրոնին, որով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը:

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.10.2015թ. ժամը 17:00-ին և 29.10.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-39/15 հանձնաժողովի նիստերի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Գեղարքունիքի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.10.2015թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-39/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ներկայացուցիչները հայտնել են, որ անհիմն են համարում «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքը:

Պատվիրատուի ներկայացուցիչները Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ պարզաբանել են, որ «ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Ճամբարակ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերումը, և նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական աշխատանքների կատարումը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը): Ինչ վերաբերում է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից՝ որպես համանման աշխատանք կատարելու պայմանագիր ներկայացված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի («Նոր-Էներջի» ՍՊԸ-ն և «Էկոլակտ» ՍՊԸ-ն գործում են համատեղ գործունեության

պայմանագրով) միջև 10.06.2014թ. և 30.09.2014թ. կնքված պայմանագրերին, ապա դրանցով կատարվել են ջրագծի կառուցման և կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ, որը չի կարող համարվել որպես բնակելի, հասարակական և արտադրական աշխատանքների՝ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների կատարում:

Գեղարքունիքի մարզպետարանը գտնում է, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից պահպանվել են ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջները:

3. ԳԲԽ-39/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.10.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-39/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-39/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար Ճամբարակ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2015թ. հոկտեմբերի 8-ին հայտարարվել է «ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտ է ներկայացրել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի կոնսորցիումը, որի գնային առաջարկը կազմել է 46 688 400 ՀՀ դրամ:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

«Մասնագիտական փորձառության» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական աշխատանքների կատարումը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթական գործունեության տեսակը): Մասնակիցը որպես սույն ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ հայտով ներկայացնում է նաև նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

3. «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագրեր, ներկայացրել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի («Նոր-Էներջի» ՍՊԸ-ն և «Էկոլակտ» ՍՊԸ-ն գործում են համատեղ գործունեության պայմանագրով) միջև 10.06.2014թ. կնքված «Երևան քաղաքի Հալաբյան և Արզումանյան փողոցների խաչմերուկից մինչև Արզումանյան և Բաշինջաղյան փողոցների խաչմերուկ ջրագծի կառուցման և Բաշինջաղյան 159/1 շենքի կոյուղագծի վերակառուցման» կապալային աշխատանքների «ՊՎԱԸԾ/Արզումանյան ԲաշինջաղյանԱշխ/20» ծածկագրով և «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ու Ընկերության միջև 30.09.2014թ. կնքված «Բաշինջաղյան 79-87 և Անդրանիկի 158 (Բ-1 թաղամասի 40-46) շենքերի կոյուղագծերի վերակառուցման» կապալային աշխատանքների «ՊՎԱԸԾ/ԲաբԱնդրԱշխ/31» ծածկագրով պայմանագրերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.10.2015թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի՝

• 1.5.3 ենթակետի համաձայն՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ և «Էկոլակտ» ՍՊԸ համատեղ ներկայացրած հայտի հայտարարություն մասնագիտական փորձառության մասին 3.1 հավելվածով որպես նախկինում կատարված նմանատիպ աշխատանք ներկայացվել է Երևան քաղաքի «Արզումանյան փ.՝ Հալաբյան և Արզումանյան փողոցների խաչմերուկից մինչև Արզումանյան և Բաշինջաղյան փողոցների խաչմերուկ ջրագծի կառուցում և Բաշինջաղյան 159/1 շենքի կոյուղագծի վերակառուցում» և «Բաշինջաղյան 79-87 և Անդրանիկի 158 (Բ-1 թաղամասի 40-46) շենքերի կոյուղագծերի վերակառուցում» պայմանագրերը, որոնք հրավերով սահմանված պայմաններով նմանատիպ չեն համարվում:

• 1.7.1 ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Նոր-Էներջի» ու «Էկոլակտ» ՍՊԸ-ների կողմից համատեղ ներկայացված և «Արման-Երեմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և ընտրված մասնակից ճանաչել «Շինարար-10» ՍՊԸ-ին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը

գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը:

ՀՀ կառավարության 02.07.2009թ. «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլատվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզավորման ձևը հաստատելու մասին» N 777 որոշմամբ հաստատվել է «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլատվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը (N 777 որոշման 1-ին հավելված), որի 6-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք

որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանվել են բնակելի, հասարակական, արտադրական օբյեկտների (շենքերի և շինությունների) ճարտարապետաշինարարական նախագծերի մշակման, համաձայնեցման և հաստատման կարգը, իսկ նույն որոշման 4-րդ հավելվածով հաստատվել է ցածր ռիսկայնության աստիճանի (1 կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) ցանկը, որում ներառված են շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները (N 596 որոշման 4-րդ հավելված):

Վերոհիշյալ ցանկի 5-րդ կետի համաձայն՝ ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքներն ապահովում են շենքերի, շինությունների, ինժեներական սարքավորումների, ինչպես նաև դրանց առանձին մասերի պահպանումն ու շահագործման որակը և ներառում են վնասվածքների ու անսարքությունների վերացման կանխարգելիչ միջոցառումներ:

Ցանկի 6-րդ կետում սահմանված են շենքերում ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքների խմբերը, մասնավորապես՝ 6-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ շենքներում ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքներն են՝

11) ջրամատակարարում և կոյուղի՝

ա. ջրաչափիչ սարքերի տեղադրում,

բ. ջրատար և կոյուղու խողովակների ու սարքերի հոսքերի և կաթոցների վերացում,

գ. ջրատար և կոյուղու խողովակաշարերի ամրացում և մասնակի նորոգում,

դ. ցրտահարվող մասերում խողովակաշարերի ջերմամեկուսացում,

ե. կոյուղու խողովակների և սարքերի մաքրում,

զ. խողովակաշարերի հատվածների նորոգում,

է. սանհանգույցների կահավորանքի տեղադրում, առանձին սարքերի (զուգարանակոնքեր, լվացարաններ, ծորակներ և այլն) փոխում, փոխարինում:

Խորհուրդը արձանագրում է, որ Կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի միջև 10.06.2014թ. կնքված «ՊՎԱԸԾ/ԱրզումանյանԲաշինջաղյանԱշխ/20» և «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ու Ընկերության միջև 30.09.2014թ. կնքված «ՊՎԱԸԾ/ԲաբԱնդրԱշխ/31» կապալային աշխատանքների

պայմանագրերի հավելվածների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից իրականացվել են Երևան քաղաքի Արզումանյան փ.՝ Հալաբյան և Արզումանյան **փողոցների խաչմերուկից մինչև Արզումանյան և Բաշինջաղյան փողոցների խաչմերուկ ջրագծի կառուցման**, Բաշինջաղյան 159/1 շենքի **կոյուղագծի վերակառուցման** և Բաշինջաղյան 79-87 և Անդրանիկի 158 (Բ-1 թաղամասի 40-46) շենքերի **կոյուղագծերի վերակառուցման** աշխատանքներ:

ՀՀ կառավարության՝ 02.07.2009թ. «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլատվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզավորման ձևը հաստատելու մասին» N 777 և 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշումների լույսի ներքո գնահատելով Ընկերության կողմից ներկայացված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի միջև 10.06.2014թ. կնքված «ՊՎԱԸԾ/Արզումանյան ԲաշինջաղյանԱշխ/20» և «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ու Ընկերության միջև 30.09.2014թ. կնքված «ՊՎԱԸԾ/ԲաբԱնդրԱշխ/31» կապալային աշխատանքների պայմանագրերի թիվ 1 հավելվածները՝ Խորհուրդը գտնում է, որ վերոհիշյալ պայմանագրերի հավելվածներով նախատեսված և կատարված **փողոցների խաչմերուկներում ջրագծի կառուցման և կոյուղագծի վերակառուցման** շինարարական աշխատանքները չեն կարող համարվել բնակելի, հասարակական, արտադրական ոլորտում իրականացված աշխատանքներ:

Ուստի, ըստ Խորհուրդի, անհիմն է բողոքի այն փաստարկը, որ Հանձնաժողովի որոշմամբ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 31-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը, քանի որ Հանձնաժողովը որոշում կայացնելիս՝ առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներով, և մերժելով «Նոր-Էներջի» ու «Էկոլակտ» ՍՊԸ-ների կողմից համատեղ գործունեության կարգով ներկայացված հայտը, որպես Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտ, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Ենոքյան**

Անդամ՝ **Արմինե Նամալյան**